

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրության մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լրագրով:

Յայտարարութիւնները համար վճարում են

Խմբագրութիւնը տարեկան 10 կոպեկ.

Տէլէֆոն № 253.

Հոգեհանգիստները վաղամեծիկ

ԳԱՐԻԷԼ ԶՈՒՐԱՐԵԱՆ ՄԻՐԶՅՅԵԱՆԻ

Համար կատարվելու են ամեն օր, սկսած նոյեմբերի 14-ից մինչեւ թողման օրը, որի մասին նոր վիտայից մայր Նունէ Բոսնիայի Միւրգոյեանը իր որդոց հետ միասին յայտարարում է բարեկամներին եւ ծանօթներին: Մերգիւղական, սեփական տունը: Թողման օրվայ մասին կը յայտարարվի առանձին:

1—2

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Բեղմնաւոր գործունէութիւն.—Ներքին Տն-
օրինակ. Բացարարութեան կարօս. Նամակ
Բագրից. Նամակ Նոյեմբերի. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ Տն-
օրինակ. Նամակ Գարեհաստանից. Արտաքին
լուրեր.—ՀԱՌԱՄԱՐԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում:

ԲԵՂՄՆԱԿՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ԹԻՒՆ

Մեր չինը կարող զանգատվել, որ մեր
ժողովուրդը շատ ծոյրերիցը եւ անհոգե-
րիցը լինել: Մեր ժողովուրդը թշնամի
է աշխատանքի եւ չէ փախչում իր հողա-
գործական նաւը: Կարողաւորութիւնները
նա խնդրում է հող, նա ցանկանում է
ունենալ իր տրամադրութեան տակ մեծ
տարածութիւններ, որպէս զի մշակել նը-
րանց եւ ոչ միայն ապահովել իր առօրեայ
հրապոյսները, այլ եւ մեծացնել իր հարս-
տութիւնը:

Աշխատասիրութիւն եւ տոկոսութիւն
կայ, սակայն ինքը աշխատանքը մնացել է
մեծ մասամբ իր նախապետական կազմա-
կերպութեան մէջ, չէ բարեփոխվել եւ բա-
ւականաւոր արդիւնաւէտ չէ: Այն ար-
դիւնքը, որ նա այժմ ստանում է, կարող
էր կրկնապատկել, եւ ապաւորվել, եթէ աշ-
խատանքի մէջ մտնելին մի շարք կատա-
րելագործութիւններ, որոնցից ներկայումս
նա զուրկ է: Ի՞նչ է հողագործը մտնել
կատարելագործված գութան, հնձող, կայ-
սող, զտող եւ ուրիշ մեքենաներ, նա ըն-
դունակ կը լինէր տնտեսելու մեծ ժամա-
նակ, աւելի կտտարեւալ կերպով մշակելու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թողութիւններ)

XXXV

Յօդոնցիայի մայրը... Հմայից ժամանակ է
նշանակաւ գործնական օրերը յաջորդում են
իրար առեւ փոխ շաբաթներ համար. բնութիւնը
այնքան գեղեցիկ է, այնպէս հաճելի է զրոյս
թափառել, որ քանի օր է այտանել եւ, այսօր
միայն գնում եմ փակվելու միւզէներում, այն
էլ ժամանակիս սղութիւնից ստիպված: Նշա-
նաւոր, հարուստ միւզէն Gallerie des office-ն է
իշխանական հրապարակի վրա. որպիսի անօրի-
նակ երեւոյթ այս ազգայն իտալիայում. միւ-
զէն զրանը, հրապարակի վրա ոչ մի ձեռք չէ
մեկնվում դէպի ճանապարհորդը եւ մարդ հան-
գիստ սրտով բարձրանում է աստիճաններից
դէպի պալատի առաջին յարկը:

Բաղմաթիւ միւզէները, որ մարդ այցելում է
իտալական քաղաքներում եւ ճանապարհի յոգ-
նածութիւնները վերջի վերջոյ թուլացնում են
մարդու մէջ այն վառ հետաքրքրութիւնը, որով
նա համակված է լինում իր շրջապատութիւն-
ների սկզբում: Այս միւզէն բաղմաթիւների
կերպով հարուստ է իր արձանների, պատկեր-
ների եւ այլ հետեւութիւնների շատութեամբ,
բայց շատով եւ անցնում, աշխատելով ամե-
նապէս ընկնող գործերի առաջ միայն կանգ

Հողը եւ աւելի լաւ արդիւնք ստանալ
բան նա ունի այժմ:

Ժողովրդի մէջ կայ ձգտում դէպի եկա-
մուտի նոր արդիւնքներ, բայց չը կան հիմ-
նարկութիւններ եւ դեկլարացիաներ, որոնց
օգնութեամբ նա կարող լինէր ընտելանալ
աշխատանքի նոր եղանակներին, Ոչ դպրոց,
ոչ փորձնական կայարան, ոչ արհեստա-
նոց, ոչ գործնական ուսուցիչներ—ինսու-
րուկտորներ չեն այցելում ժողովրդի լայ-
նաւարած խաւերը, չեն գրաւում ժո-
ղովրդի զաւակներին դէպի կրթարաններ
եւ այդպիսով չեն աշակցում մասսային կա-
տարելագործելու իր հին արհեստը եւ
իւրացնելու նորը:

Ներկայումս, երբ կառավարական բարձր
շրջանները այնքան մեծ համալիրութեամբ
են նայում ամեն մի կուլտուրական առա-
ջարկական փորձի, երբ պետութեան գա-
նազան մասերում քննութեան են են-
թարկված տեղական կարիքները, անհրա-
ժեշտ է, որ բոլոր այն ինտելիգենտ ան-
ձինք, որոնք կարող են որ եւ ձեռնով
նպաստել ժողովրդական արդիւնաբերու-
թեան զարգացման, արթնանան իրանց
թմրած գրութիւնից եւ ձեռք մեկնեն ազ-
գաբնականութեան: Միայն այն ժամանակ,
երբ կրթված անձինք կը մտնեն իրանց
տեղէն եւ անպատաստ հողագործ եւ ար-
հեստաւոր եղբայրակիցներին եւ կը սկսեն
օգնել նրանց գութն գալու իրանց տնտեսա-
կան նեղութիւններից, կը բարձրեն նրանց
տնտեսական, հասարակական կեանքը, կը
տան նրանց լաւ տնտեսներ, գատաւոր-
ներ եւ ամեն տեսակ գործավարներ, կը
բանան գիւղերում փոխառու խնայողական
եւ ուրիշ ընկերութիւններ, կը նպաստեն

առնել Ամենից առաջ ինձ գրաւում է Բաֆա-
յէի ս. Յովնանէն, որ այնքան նման է Հո-
մի Սէն-Լուկայի գործնական երեւոյթին. նոյն
խմբակներն են, նոյն անօրինակ կենդա-
նութիւնը դէմքին, նոյն անմեղութեան, սրբու-
թեան հմայքը, որ ծաղիկ բուրմունքի պէս բա-
ժանվում է այդ դէմքի եւ համակում դիտո-
ղին: Նա կանգնած մի ժայռի վրա անապատում
մեն մենակ, իր ընկերն է մի եղբայն, մի դա-
լար եղբայն, որ իր մերկութեան մէջ անկարող
է հովանի անել մենեւորի գլխին. նա մի պա-
տանի է, հազիւ 16—17 տարեկան, վարդ չը-
թունները կրտաւր, մի բան, մի խորհրդաւոր
փսեմ բան առելու ակներեւ ցանկութեամբ:
Ուր է տեսել արդեօք Բաֆայէին այսպիսի մի
երեւոյթ. երեւակայն է արդեօք եւ միջէ ա-
մեն մի իսկական գեղեցկութիւնը միշտ երե-
ւակայական է մեր երկնքի տակ:

Միջեր-Անշնչոն այտանող ունի մի փոքրիկ կը-
տաւ, «Սուրբ ընտանիք», այցելուները խումբ
խումբ գալիս կանգնում են այդ նկարի առաջ,
չառ նշանաւոր գործ չէ, աւելի շատ մի էքզի-
զ, բայց հանձնարող արուեստագէտի ձեռքի ա-
մենաթիւնը շարժումն անգամ դարձել է լուռ
հիպոնոզի, պաշտամունքի նիւթ. ընտան-
տութիւնը լուռ է մեծութեան առաջ, ինչպէս
որ բնութեան մի հսկայ տեսարանի կամ երե-
ւոյթի հանդէպ մարդկային լեզուն համար է
կարող:

Պատկերների եւ արձանների դասիւններից ոչ
պակաս հետաքրքիր է այս միւզէնում այն սե-
նակը, ուր զետեղված են Մեդիչիներից մնա-
ցած հարստութիւնները, թանկագին քարերից

շինելու ուղիներ, կամուրջներ, կանցկաց-
նեն առուներ եւ ամեն կերպ կօգնեն բա-
ւարարութիւն տալու տեղական պահանջ-
ներին, այն ժամանակ կը բեղմնաւորվի
մեր գաւառական կեանքը եւ նա կը դառ-
նայ զբաղիչ ոչ միայն այնտեղ ապրող ժո-
ղովրդի համար, այլ եւ այն բոլոր անձերի,
որոնք կը ցանկանան ապրել գաւառական
շրջանում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ

Կարգադրել, ընթերցող, «Մշակի» մէջ տպված
պ. Միջոցաւոր յօդուածը, որից երեւում է, որ
թուրքերէն ներկայացուցիչների ժամանակ կա-
նացի դերերը խաղում են կամ տղամարդիկ
կնոջ զգեստով կամ ռուս կանայք: Ազգպէս է եւ
ամեն տեղ. դեռ մենք չենք ինչու, որ Ռու-
սաստանում որ եւ է թուրքաբանի քաղաքում
թուրք կամ մահմեդական կինը բնի գութն
եկած լինի, որ նա վճռէ խախտել աւանդական
սովորութիւնը եւ հանդէս գալ իրեն անկախ,
ինքնուրոյն մարդկային էակ այն բոլոր ասպա-
րէզներում, որոնց վրա օտար ազգերի եւ դա-
ւանութիւնների կանայք վաղուց գործում եւ
աշխատում են: Ինչ է այդ տխուր երեւոյթի
պատճառը. ինչու մահմեդական կինը չէ կամ-
նում կամ, աւելի ճիշդն ասել, չէ կարողանում,
որ եւ է չափով մասնակցել հասարակական
գործերին եւ մի քանի ասպարէզներում ձեռք
ձեռքի տուած գործել տղամարդկանց հետ,
երկու միւս տարրեր—հայերի, վրացիների,
հրէաների պէս: Պարզ է, որ կայ մի կարեւոր
պատճառ, մասնաւոր որ թուրքերի մէջ կրթ-
ված կանայք այնքան էլ հազաւագիւտ չեն, եւ
մենք գիտենք, որ թուրք օրիորդներ կան գիմ-
նազական կրթութիւն ստացած: Սակայն
նրանցից ոչ մինը վստահութիւն եւ վճռողկա-
նութիւն չունենցաւ մինչեւ այսօր հրապարակ
գալ եւ գործել, գոնէ թուրք կանանց համար
իրեն վարժուել, դերասանուել, բժշկուել:

Այդպիսի տխուր երեւոյթի պատճառը, մեր
կարծիքով, պէտք է որոնել թուրք կամ մահմե-
դական հասարակութեան բարոյական եւ կրօ-
նական աշխարհայեացքի մէջ եւ մասնաւոր
չարիքի պատուիրանների մէջ, որոնց համա-

վազեր, աղամաններով զարդարված ոսկեայ
տուփեր, բաժակներ, սկիւններ, անօթներ, որոն-
ցից իւրաքանչիւրը մենակ թէ արուեստի եւ
թէ հարստութեան տեսակետով մի մի անգնա-
հատելի գանձեր են: Այս փոքրիկ սենեակը մի
լաւ ապացոյց է, թէ ինչպէս երբեմն մի հաս-
նունդից կարող է ծծել մի ամբողջ ժողովրդի
կենսական հիւթերը մեն մենակ իր վայելքների
համար, թէ ինչպէս հազար ձակաւորների դառն
քրտինքը կարող է դառնալ մի հատիկ աղա-
մանը մի երջանիկ մատուց վրա, որ երբեք չը
գիտէ թէ ինչ է աշխատանքը:

Եւ թողնում եմ այս միւզէի մնացած առ-
ձաններն ու պատկերները եւ շատաւոր եմ
դէպի Gallerie Pitti, որ, ինչպէս հաւատադ-
նում են, շատ աւելի հետաքրքիր է քրտինքի
Այս երկու միւզէները միասնաբար երկար ներանց-
քով, իր տեսակի մի վերին աստիճանի օրիգի-
նալ գործ է: Իբրեւ պատկերների միւզէ, այս
Gallerie Pitti-ն արդարեւ իր նմանը չունի
Յօդոնցիայում, ինչպէս եւ իտալիայի շատ ու-
րիշ քաղաքներում. գուցէ միայն Հոմը կարո-
ղանայ արանից գերազանցել, այն էլ եթէ ի նկա-
տի ունենանք նրա շատ միւզէները եւ ոչ մի
հատը Gallerie Pitti-ը տեսնելու համար արժէ
այցելել Յօդոնցիան:

Ինչ միւզէ կը ճարվի այնպէս հարուստ Բա-
ֆայէի գործերով, որքան այս գալերիան. հա-
մարեա իւրաքանչիւր դարձնում նա մի այլ
ընկնող, ինչոք օտեղծագործութիւն ունի: Եւ
կանգ կտանեմ դրանցից մէկի՝ Մադոնայի վրա:
Դա մի մայր է, բայց կուսական բոլոր ընթու-

ձայն կինը, նախ հաւատար էակ չէ տղամարդի
հետ, այլ ըստ արժեքի, տղամարդի կէտն է
կազմում. երկրորդ՝ կինը մահրամ է, այսինքն
մատչելի, տեսանելի է միայն իր ամուսնու
համար, իսկ օտար տղամարդկանց վերաբեր-
մամբ, նոյն իսկ ամենամօտ ազգականների,
աւամահրամ է:

Եւ ահա այն սակաւթիւ կրթված մահմե-
դական կանայք, որոնք կը ցանկանային գուցէ
ասպարէզ դուրս գալ եւ հասարակական գոր-
ծունէութեան մասնակցել, չեն վստահանում
դեռ նոյն իսկ XX-րդ դարում այդպիսի մի
համարձակ քայլ անել, այնքան դեռ զօրեղ եւ
համատարած է նուիրութեան աւանդութիւնը,
այնքան խիստ է չարիքի հեղինակութիւնը:

Եւ օակայն կան թուրք հրապարակախօսներ,
օրինակ Բագրի «Kacim» լրագրի հրապարա-
կախօսները, որոնք ամեն կերպ աշխատում են
ցոյց տալ եւ համոզել մեզ, թէ ոչ մի կրօնի
առաջ, ոչ մի ժողովրդի մէջ կինը այնքան մեծ
ազատութիւն եւ յարգանք չէ վայելում, ինչ-
պէս իսլամ կրօնի առաջ եւ թուրք ժողովրդի
մէջ: Այդ հրապարակախօսները հասան նոյն իսկ
այնպիսի անհիթթութեան, որ սկսեցին բա-
ցարձակ քարոզել, թէ կնոջ էմանսիպացիայի
խնդիրը, որ քաղաքակրթ եւ քրիստոնէայ եւ-
րօպական աշխարհը դեռ չէ կարողացել լուծել,
իսլամ կրօնը վաղուց լուծել է եւ մահմեդա-
կան կինը ամենամեծ ազատութիւն եւ հաւա-
սարութեան իրաւունք է վայելում: Այդ թէզը
ապացուցանելու համար, «Kacim» լրագրի
հրապարակախօսները փաստեր չեն բերում:
միակ փաստը այն է, որ շարիատով կինը իրա-
ւունք ունի ամուսնուց անկախ սեփականու-
թիւն ունենալ եւ ժողովրդական աւելի մեծ
իրաւունքներ է վայելում, քան ոչ—մահմեդա-
կան կինը: Բայց թէ ինչու մուսուլման կնոջ
չէ թոյլատրվում տղամարդկանց աչքին երե-
ւալ, նրանց հետ ազատ խօսել, բանակցել,
ինչու նրանց չէ թոյլատրվում հրապարակաւ
ժողովներում, թատրոններում յայտնվել տղա-
մարդկանց հետ միասին եւ ինչու այդ սովոր-
ութեան հակառակ մի քայլ մահմեդական կնոջ
կողմից համարվում է ամուսնու համար առիթ
ամուսնալուծութեան,—ահա այդ կէտերը մեզ
բացատրելու նեղութիւնը չեն կրում թուրք
հրապարակախօսները:

Երկուսից մէկը. կամ, արդարեւ, իսլամ

թեմամբ, բոլոր անարտաբնութեամբ իր զբանջելի
դէմքի վրա. նրա մայրութիւնն արտայայտվում
է այդ աստուածային Երեւանի գրկելու եղա-
նակի մէջ. միայն մայրը կարող է այդ ձեռով
իր կրծքին սղմել մի երեխայ. որ կողմից եւ
նայում եւ նրա դէմքին, այդ խանդավառան-
քով ընթրող սիրով ի աչքերը շարունակ ձեռք
են նայում եւ կարծես ասում են՝ ես երջանիկ
եմ, ես օրհում եմ քոն, շատ եմ օրհում, եւ
տիեզերքի հետ չեմ փոխի այս իմ օրհասուն
զաւակին: Այդ արտայայտչի, սիրով հայեաբեր
առաջ անկարելի է ինքում չը մտաբերել հրա-
շալի կոնտրաստը, կատարված փաստի բոլոր
տրագիկը եւ մարդ մտքում ասում է՝ խեղճ
մայր, հէնց այդ երեխան է, որ պիտի գոհվի
տիեզերքի փրկութեան համար: Եւ այդ հրա-
շալի երեխան, այդ գերնական դէմքով հրեշ-
տակը այնպէս է սղմվում մոր կրծքին, կանգն
պաշտպանութիւն է փնտռում այնտեղ հեռա-
ւոր վտանգից, առեւ աշխատում է զգալ մօր
կրծքի ջերմութիւնը, նրա սրտի բաբախումը:
Դա մի նկար է, որ մենակ բաւական է մի
միւզէ հետաքրքիր դարձնելու:

Առանձին ուղադրութիւն են գրաւում մի
քանի տարի գործեր, այսպէս Անդրէա Մին-
գայի «Եւայի ստեղծագործութիւնը», «Աղամ
եւ Եւայի գրախոսում» Յօդոնցիայի Յօդոնցիայի,
եւ մասնաւոր Ալլօրի Գրիտոֆանիի «Յօդոնցի»
իր յայտնի ապանութիւնը կատարելուց յետոյ
եւ դարձեալ Բաֆայէի «Սեղեկէի տեսիլքը»
Gallerie Pitti-ը կարելի է շրջել մի քանի ան-
գամ նրա բոլոր պատկերների հետ մօ-
տիկից ծանօթանալու համար. այցելուները ա-

Электротпечатная Грвз. Издат. Т—ва. Б.-Ванкская уд.